
**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆ Ա. Վ.

Ինչպես ներդրումային գործունեությունը, այնպես էլ ներդրումային քաղաքականությունը ցանկացած երկրի տնտեսագիտության և հատկապես ֆինանսական մենեջմենթի բնագավառում չափազանց քննարկված ու բազմաբնույթ սահմանումներ և մեկնաբանություններ ունեցող հասկացություններից է: Մասնավորապես, ֆինանսների տեսության մեջ, ներդրումները ներկայացվում են, որպես ակտիվի ձեռք բերում՝ ավելի բարձր գնով վաճառքից կամ իրացումից եկամտի ստացման ակնկալիքով: Այն, ընդհանուր առմամբ, չի ներառում բանկային ավանդները կամ համանման այլ ներդրումները: «Ներդրումներ» եզրույթը սովորաբար օգտագործվում է, երբ խոսքը վերաբերում է երկարաժամկետ հեռանկարում դրանից եկամտի ստացման ակնկալիքին, սակայն վերջինիս հակառակ, առևտրային կարճաժամկետ ներդրումներն ունեն ավելի բարձր ռիսկի աստիճան:

Ներդրումային գործունեություն իրականացնելիս առևտրային բանկերը առնչվում են մի շարք ռիսկերի հետ, որոնցից առանձնացնենք հետևյալները²՝

- Շուկայական ռիսկ, որը ներդրումային և ֆինանսական գործիքների տոկոսադրույքների, փոխարժեքների և գների աճի/անկման հետևանքով առևտրային բանկի կողմից հնարավոր վնասներ կրելու հավանականությունն է: Այն իր հերթին բաղկացած է հետևյալ տեսակներից՝

1. տոկոսային (տոկոսադրույքի),
2. արժույթային,
3. գնային:

Շուկայական ռիսկը կառավարվում է ներդրումային փաթեթի դիվերսիֆիկացման միջոցով:

- Իրացվելիության ռիսկը կապված է շուկայի ոչ բավարար իրացվելիության հետ, որը ենթադրում է տվյալ ֆինանսական գործարքի նկատմամբ շուկայի մասնակիցների հետաքրքրության նվազում:

- Թողարկողի (էմիտենտի) և փոխառուի ռիսկ, որը կարող է առաջանալ արժեթղթեր թողարկողի ցածր ֆինանսական գործակիցների, ցուցանիշների,

¹ <http://www.investopedia.com/terms/i/investment.asp>

² Տե՛ս Ասատրյան Բ., Բանկային գործ, Ե., 2004:

տնտեսական դժվարությունների պայմաններում, և որոնց հետևանքով առևտրային բանկերը կարող են վնասներ կրել:

- Իրավական կամ օրենսդրական ռիսկ՝ կապված նոր օրենսդրական ակտերի ընդունման կամ դրանց էական փոփոխությունների հետ, և որը կարող է առաջացնել արժեթղթերում ներդրումներից հնարավոր կորուստներ:
- Ածանցյալ գործիքներով գործառնությունների հետ կապված ռիսկ:
- Ներդրումային գործունեության իրականացման ընթացքում շահերի բախման հետ կապված ռիսկ:
- Ներդրումային գործունեության հետ կապված այլ ռիսկեր, այդ թվում՝ գործառնական: Վերջինս կարող է առաջանալ ներդրումային գործարքների իրականացման ընթացքում տեխնիկական անսարքությունների, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարման, աշխատակիցների սխալի պատճառով:

Առևտրային բանկերի ներդրումային գործունեությունը և դրա սահմանափակումները սահմանված են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում³: Մասնավորապես ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված է, որ՝ բանկերը կարող են իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն, այն է՝ իրենց կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը և ներդրումային այլ արժեթղթերը (բաժանորդագրական գործունեություն):

Միաժամանակ, բանկերին արգելվում է տեղաբաշխել որևէ անձի արժեթղթեր, ինչպես և այդ անձին՝ տվյալ արժեթղթերից բխող պարտավորությունները կատարելու համար վարկեր տրամադրել:

Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության բանկերին արգելվում է իրականացնել այնպիսի գործարքներ կամ գործառնություններ, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը՝

- մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն է.
- մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը.
- բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը:

³ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1681&lang=arm>

Բացի դրանից, բանկի կողմից իր բաժնետոմսերը զեղչելը, գնելը կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերելը, դրանք գրավ ընդունելով վարկ տրամադրելն արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելն անհրաժեշտ է տվյալ բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար. ընդ որում, բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից երկու ամսվա ընթացքում իրացնել դրանք:

Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև տվյալ բանկի ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերն առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը երկարացնել նս վեց ամսով:

Առհասարակ, ներդրումային քաղաքականությունը սահմանում է բանկի ներդրումային գործունեության նպատակները, ներդրումային փաթեթի նպատակային կառուցվածքը և դրանց թույլատրելի կենտրոնացումների սահմանաչափերը, ներդրումների դիվերսիֆիկացիայի սկզբունքները, ներդրումների վերաբերյալ որոշում կայացնող մարմինների, ներդրումային գործարքներ կնքելու իրավասություն ունեցող ղեկավարների գործունեության չափերը, ներդրումային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը և գործընթացին առնչվող այլ հարաբերություններ՝ նպատակ հետապնդելով իրացվելիության ընդունելի մակարդակի պահպանմամբ նպաստել բանկի շահութաբերության մակարդակի բարձրացմանը⁴:

Բանկը ներդրումային գործունեություն իրականացնելիս առաջնորդվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջներով, այլ իրավական ակտերով:

Մասնավորապես, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները սահմանված են ՀՀ ԿԲ կանոնակարգ 4/12-ով: Ըստ այդմ, սահմանված են արժեթղթերով ֆինանսավորման գործարքը, արժեթղթերը փոխառությամբ տրամադրելու կամ ստանալու գործարքը, ռեպո կամ

⁴ http://www.artsakhbank.com/our-services/corporate/investment-banking_legal-entities.html

⁵ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63195> - «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները» կանոնակարգ 4/12:

հակադարձ ռեպո գործարքը, կամ հետվաճառքի իրավունքով գնման կամ հետգրնման իրավունքով վաճառքի գործարքը:

Բանկի հաճախորդներին պատկանող արժեթղթերի և դրամական միջոցների հետ կապված հաճախորդների շահերի պաշտպանության նպատակով ներդրումային ծառայություններ մատուցող անձը պարտավոր է՝

1) Պահպանել տեղեկատվություն և վարել այնպիսի հաշվառում ու հաշիվներ, որոնք թույլ կտան ցանկացած պահի և առանց ուշացման առանձնացնել յուրաքանչյուր հաճախորդի միջոցները այլ հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներից:

2) Պահպանել տեղեկատվությունն ու վարել հաշվառում և հաշիվներն այնպես, որ ապահովվի դրանց ճշգրտությունը և համապատասխանությունն իր տիրապետմանը և (կամ) կառավարմանը հանձնված հաճախորդների դրամական միջոցներին ու արժեթղթերին:

3) Պարբերաբար իրականացնել համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ, որոնք առնչվում են գոյություն ունեցող հաճախորդների միջոցների հաշիվների վերաբերյալ տեղեկատվությանը⁶:

4) Ապահովել, որ երրորդ անձի մոտ պահվող ցանկացած հաճախորդի արժեթղթերը հնարավոր լինի առանձնացնել ներդրումային ծառայություններ մատուցող անձին պատկանող արժեթղթերից, ինչպես նաև երրորդ անձի արժեթղթերից՝ արժեթղթերի հաշիվների տարբեր անվանմամբ կամ պաշտպանության համարժեք մակարդակ ապահովող այլ միջոցներով: Նշված պահանջը չի տարածվում ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից իր հաճախորդին պատկանող պետական արժեթղթերը պետական պարտատոմսերի ենթապահառու հանդիսացող անձի փոխանցման դեպքի վրա, եթե պետական պարտատոմսերի ենթապահառուի մոտ ներդրումային ծառայություններ մատուցող անձի և նրա հաճախորդների արժեթղթերի համար առանձին (տարբեր անվանմամբ) հաշիվների բացումն անհնար է:

5) Ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական միջոցներ հաճախորդների միջոցների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ անտեսման արդյունքում հաճախորդների միջոցների կամ այդ միջոցների հետ կապված իրավունքների կորստի ռիսկը կառավարելու համար⁷:

⁶ Տե՛ս ն ու յ ն տեղ ու մ:

⁷ Տե՛ս ՀՀ ԿԲ կանոնակարգ 4/12, կետ 4 - <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63195>

Ներդրումային քաղաքականությունը, այսպիսով, կոչված է առևտրային բանկերի համար հավելյալ եկամուտ ստանալու ակնկալիքով և միաժամանակ դրանց տրամադրության տակ գտնվող ազատ ֆինանսական միջոցները հուսալի ակտիվներում ներդնելու միջոցով ապահովել ներդրումային փաթեթի օպտիմալ կառուցվածք: ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեության եկամուտները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ ըստ տարիների (բացի շահույթի մեծություններից)⁸ բոլոր ցուցանիշների գծով նկատվում է աճի միտում: Մասնավորապես, տոկոսային եկամուտները, որոնք 2014 թ. 2010 թ. նկատմամբ ավելացել են 142.652 մլն. դրամով կամ 104.8%-ով, իսկ ոչ տոկոսային եկամուտները՝ 51.475 մլն. դրամով կամ 66.4%-ով: Չնայած ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերություններով պայմանավորված՝ առևտրային բանկերն ապահովել են հարկումից հետո զուտ շահույթով, այնուհանդերձ, ուսումնասիրվող տարիներին ունեցել են նվազման միտում, որը 2010 թ. 30.207 մլն. դրամից 2014 թ. կազմել է 21.112 մլն դրամ:

Աղյուսակ

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքների դինամիկան վերջին հինգ տարիների (2010-2014 թթ.) կտրվածքով՝ մլն. դրամ

Ցուցանիշների անվանումը	2010	2011	2012	2013	2014
1	2	3	4	5	6
տոկոսային եկամուտներ	136,161	175,484	225,728	254,956	278,813
տոկոսային ծախսեր	58,670	81,463	111,194	135,129	149,846
Զուտ տոկոսային եկամուտներ	77,491	94,021	114,534	119,828	128,966
Ոչ տոկոսային եկամուտներ	40,664	48,585	56,481	67,390	82,046
Ոչ տոկոսային ծախսեր	69,352	81,592	96,475	106,723	114,695
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	(28,689)	(33,006)	(39,994)	(39,333)	(32,649)
Զուտ մասհանումներ	9,903	18,154	19,812	31,157	66,719
Շահույթ մինչև հարկումը	38,899	42,860	54,728	49,338	29,598
Շահութահարկ	8,693	9,672	12,257	11,204	8,486
Զուտ շահույթ	30,207	33,188	42,471	38,134	21,112
Հաշվարկված շահաբաժիններ	152	196	196	340	384
Զբաղիված շահույթ	30,055	32,992	42,275	37,794	20,728

⁸ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Պետք է նշել այն իրողությունը, որ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների համար իր ուրույն տեղն ունի վարկային փաթեթը: Դրա ձևավորման ընթացքում առևտրային բանկերն առաջնորդվում են ներդրումների դիվերսիֆիկացման մի շարք սկզբունքներով՝ որոնցից են՝

- հուսալիությունը, ինչը ենթադրում է ներդրումների իրականացում առավել հուսալի ակտիվներում, ապահովվածություն ունեցող ներդրումային գործարքների ներդրումը փաթեթում, արդյունքում երաշխավորելով ներդրված մայր գումարի վերադարձը,

- իրացվելիությունը, ինչը ենթադրում է, որ կատարված ներդրումները կապահովեն իրացվելիության այնպիսի մակարդակ, որը թույլ կտա առևտրային բանկերին պատշաճ կառավարել իրենց դրամական հոսքերը,

- եկամտաբերությունը, ինչը ենթադրում է ներդրումների բազմազանացման հուսալիության և իրացվելիության սկզբունքների պահպանման պայմաններում ապահովել ու ներդրումների առավելագույն եկամտաբերության մակարդակ:

Ներդրումային փաթեթի ձևավորման և միջոցների տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերը պետք է առաջնությունը տան մի շարք գործիքների, մասնավորապես՝ ՀՀ պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի շրջանառությանը, որոնք կարող են լինել նաև առևտրային բանկերի կողմից կնքվող ռեպո/հակադարձ ռեպո գործարքների առարկա:

Ներդրումային գործունեություն իրականացնելիս դրա գծով փաթեթի բազմազանացման և ռիսկայնության նվազեցման նպատակով առևտրային բանկերի կողմից կարող են սահմանվել ներդրումային կենտրոնացման մի շարք սահմանաչափեր, օրինակ՝ արժեթղթերի և ընդհանուր ակտիվների կամ պետական պարտատոմսերումներ դրումների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունները և այլն:

Այսպիսով՝ ընդհանրական առումով նշենք նաև այն, որ առևտրային բանկերի ներդրումային գործունեության իրականացման և կառավարման համար կարևորվում է նաև փաթեթի հաշվառումը, վերահսկողությունը, դասակարգումն ու վերագնահատումը: Մասնավորապես, առևտրային բանկերի ներդրումային գործունեության հաշվապահական հաշվառումն իրականացվում է ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» և այլ կարգավորող նորմատիվային ակտերի: Առև-

տրային բանկերի կողմից կատարվող ներդրումներն արտացոլվում են առևտրային բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ ՀՀՄՄ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտով սահմանված կարգով:

АНАЛИЗ ФИНАНСОВЫХ РЕЗУЛЬТАТОВ ИНВЕСТИЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ТОРГОВЫХ БАНКОВ РА

АРУТЮНЯН А. В.

Резюме

Для реализации и осуществления инвестиционной деятельности торговых банков весьма важное значение имеет оценка портфеля, контроль, классификация и т.д. В частности, бухгалтерский учет инвестиционной деятельности торговых банков осуществляется на основе закона РА «О бухгалтерском учете» международных стандартов по бухгалтерскому учету и финансовой отчетности, а также на основе утвержденного Центробанком РА "Очетного плана действующих на территории РА банков" и иных регулирующих нормативных актов.

ANALYSIS OF THE FINANCIAL RESULTS OF THE INVESTMENT ACTIVITIES OF THE COMMERCIAL BANKS OF THE RA

A. HARUTYUNYAN

Abstract

Commercial banks' investment activity is also important for the implementation and management of portfolio accounting, control, evaluation and classification. In particular, commercial banks, investment accounting activities are carried out in accordance with the Law on the "Accounting and Financial Reporting Standards", approved by the Central Bank "The Reporting Plan of the Banks operating in the RA" and other regulatory legal acts.